


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ 2053 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 423717.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 418417.6 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 51513.2 մլն դրամի, այլ երկրներում՝ 97863.9 մլն դրամի արտադրանք:

2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 114.9%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 118.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2001թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2002 թ.			
հունվար	71.7	107.1	71.7
փետրվար	100.9	104.5	72.3
մարտ	116.4	116.9	84.2
ապրիլ	88.1	115.6	74.2
մայիս	95.2	107.3	70.6
հունիս	103.7	115.8	73.2
հուլիս	114.4	104.6	83.7
օգոստոս	96.0	96.1	80.4
սեպտեմբեր	102.7	116.1	82.6
հոկտեմբեր	108.3	137.4	89.5
նոյեմբեր	94.8	123.7	84.8
դեկտեմբեր	127.1	100.3	107.8

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2003 թ.			
հունվար	78.9	109.9	78.9
փետրվար	99.1	105.7	78.2
մարտ	105.5	115.5	82.5
ապրիլ	94.9	126.2	78.3
մայիս	96.4	136.0	75.5
հունիս	117.6	119.7	88.8
հուլիս	97.9	110.5	86.9
օգոստոս	103.4	127.7	89.9
սեպտեմբեր	107.2	129.4	96.4
հոկտեմբեր	102.8	108.5	99.1
նոյեմբեր	84.5	109.0	83.7
դեկտեմբեր	109.2	91.3	91.4


Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	2003թ. հունվար-դեկտեմբերին, արտադրանքի (աշխատանքնե- րի, ծառայությունների) ֆիզի- կական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատ- մամբ (համարդելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	423717.4	418417.6	114.9
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	94061.0	94061.0	101.3
<i>որանից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	88005.0	88005.0	102.5
<i>որից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	80572.3	80572.3	101.6
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	7432.7	7432.7	113.3
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	6056.0	6056.0	87.2
հանքագործական արդյունաբերություն	46642.7	36332.5	102.4
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	44255.3	33910.2	101.6
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	2387.4	2422.3	120.1
մշակող արդյունաբերություն	283013.7	288024.1	120.3
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	143726.6	144824.2	113.1
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	14252.8	12673.3	127.6
մանածագործական արտադրություն	2212.5	2347.7	148.3
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	2186.7	2168.7	121.9
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	287.1	282.2	60.6
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	1917.4	1958.6	110.4

¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ¹ , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ¹ , մլն դրամ	2003թ. հունվար-դեկտեմբերին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), %
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	6248.4	6220.3	115.0
քիմիական արդյունաբերություն	7345.4	6606.8	82.5
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	1478.7	1463.3	181.5
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	13962.9	14064.6	126.6
մետաղագործական արդյունաբերություն	46246.0	53074.4	118.3
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	3925.6	3778.7	127.7
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	5946.4	5193.0	118.1
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	21995.4	21666.7	129.3
գործունեության այլ տեսակներ	11281.8	11701.6	142.6

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2003թ. հունվար-դեկտեմբերին





- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- Հանքագործական արդյունաբերություն



² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր


Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2003թ. հունվար-դեկտեմբերին իրացվել է թողարկված արտադրանքի ծավալի 98.7%: Նշված ժամանանակաշրջանում իրացված և թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունն ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.

Իրացված արտադրանքը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ, %-ով



- 1 - էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- 2 - Հանքագործական արդյունաբերություն
- 3 - Աշակղղ արդյունաբերություն, որից՝
- 4 - սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 5 - ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 6 - մանածագործական արտադրություն
- 7 - հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 8 - կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն
- 9 - բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
- 10 - հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 11 - քիմիական արտադրություն
- 12 - ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
- 13 - այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 14 - մետաղագործական արդյունաբերություն
- 15 - պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 16 - մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 17 - ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 18 - գործունեության այլ տեսակներ

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ հանրապետության մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	2003թ. հունվար-դեկտեմբերին արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), %
Ընդամենը ՀՀ	423717.4	418417.6	114.9
<i>այդ թվում՝</i>			
ք. Երևան	209100.5	208948.5	119.7
Արագածոտն	7777.7	7977.3	155.2
Արարատ	36520.9	40527.6	94.7
Արմավիր	20815.8	21405.3	97.2
Գեղարքունիք	13255.2	5215.8	122.3
Լոռի	18751.3	19060.4	104.6
Կոտայք	57309.8	55290.7	120.3
Շիրակ	11630.6	11528.0	104.0
Սյունիք	41486.0	41393.8	104.2
Վայոց ձոր	3493.4	3494.1	108.1
Տավուշ	3576.2	3576.1	111.7

2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 9 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև, ըստ մարզերի և արտադրությունների.

-Երևան քաղաքում՝ 19.7%, հիմնականում ի հաշիվ ռետինե և պլաստմասսայե (196.1%), մետաղագործական արդյունաբերության և պատրաստի մետաղե (190.0%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (160.4%), մանածագործական և կարի (147.1%), էլեկտրական, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի (144.2%), մեքենաների և սարքավորանքի (120.7%), սննդամթերքի, ներառյալ խմիչքները (115.6%), ոսկերչական (112.2%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (108.6%),

-Արագածոտնի մարզում՝ 55.2%, հիմնականում ի հաշիվ ադամանդների (2 անգամ), ինչպես նաև հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (144.6%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (115.6%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (111.4%),

-Գեղարքունիքի մարզում՝ 22.3%, հիմնականում ի հաշիվ մետաղե հանքաքարերի արդյունահանման (136.2%), ինչպես նաև բժշկական սարքավորանքի, ճշգրիտ և օպտիկական գործիքների և ժամացույցների (198.9%) և մանածագործական ու կարի արտադրության (191.0%),

-Կոտայքի մարզում՝ 20.3%, ի հաշիվ քիմիական արդյունաբերության (2.2 անգամ), մանածագործական և կարի (140.4%), ադամանդների արտադրության (131.6%), մետաղագործական արդյունաբերության (117.9%), մեքենաների և սարքավորանքի (108.9%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (104.8%),

-Տավուշի մարզում՝ 11.7%, ի հաշիվ թղթի և սովարաթղթի (4 անգամ), բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրության (124.7%) և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (105.3%),

¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, մարզերով առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման,, մարզերով» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-203):

² Թողարկված արտադրանքի և պատրաստի արտադրանքի իրացման ծավալներն ըստ մարզերի, նախնական են:

-Վայոց ձորի մարզում`8.1%, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (116.2%),


- Լոռու մարզում` 4.6%, ի հաշիվ էլեկտրական, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրության (4.5 անգամ), քիմիական արդյունաբերության (2.2 անգամ), բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների (186.4%), մանածագործական ու կարի արտադրության (113.8%) և մետաղագործական արդյունաբերության (109.3%),

- Սյունիքի մարզում` 4.2%, ի հաշիվ մեքենաների և սարքավորանքի (2.1 անգամ), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (2 անգամ) և մետաղե հանքաքարերի արդյունահանման (104.4%),

-Շիրակի մարզում` 4.0%, ի հաշիվ հագուստի (8.1 անգամ), մեքենաների և սարքավորանքի արտադրության (2.1 անգամ), հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (2.1 անգամ) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (117.8%):

Հարկ է նշել, որ հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի գրեթե 50%-ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության մարզերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին



Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները, ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2003թ. հունվար-դեկտեմբերին

	Կազմակերպությունների քանակը	Արդյունաբերական արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ ¹	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն.դրամ ¹	2003թ. հունվար-դեկտեմբերի արտադրանքի (աշխատանքների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), %
Ընդամենը ԳԳ	2053	78549	372871.0	367571.2	116.7
<i>այդ թվում՝</i>					
մինչև 5 մարդ (գերփոքր) ²	1045	2629	7376.0	7570.2	72.4
6 – 50 մարդ (փոքր) ²	718	11601	41164.4	40725.3	125.8
51 – 100 մարդ (միջին) ²	101	7599	15747.9	17122.4	131.2
101 և ավելի մարդ (խոշոր) ²	189	56720	308582.7	302153.3	116.6

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 50.9 և 35.0%: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված գրեթե 86% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 13.0%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 9.2% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 82.8%-ը:

2003թ. հունվար-դեկտեմբերին արտադրված (հաշվառվող) 109 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 72-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2002թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 57-ից 36-ի և սպառողական ապրանքների՝ 52-ից 36-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները³

(մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-դեկտեմբերին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2003թ.	2002թ. ⁴	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	182833.9	155454.9	117.6
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	96199.4	87271.1	110.2
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	41664.5	34472.9	120.9
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	44970.0	33710.9	133.4
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ⁵	12157.3	9259.8	131.3
նշակութակենցադային և տնտեսական նշանակության	32812.7	24451.1	134.2

¹ Առանց անենամայա վիճակագրական մոնիթորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության զննահատման (ըստ ցածր առածականությամբ ապրանքների բազային ցուցանիշի):

² Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-205):

³ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

⁴ 2002թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2003թ. գներով:

⁵ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 5500.6 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 99.8%-ը: Ընդ որում, ՅԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 19.7%-ով, իսկ ՅԱԷԿ-ում և ՋԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար, 12.5 և 3.2% -ով:

2003թ. հունվար-դեկտեմբերին ՅԱԷԿ-ը թողարկել է 1997.6 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 36.3%-ը, ՅԷԿ-երը՝ 1981.8 մլն. կվտ ժամ և 36.0%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 1521.2 մլն. կվտ ժամ և 27.7%-ը: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 343.0 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 92.7%:

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները¹

	2003 թ. հունվար-դեկտեմբեր	2002 թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Միս ² , տոննա	41108	38396	107.1
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ² , տոննա	218152	206864	105.5
Պանիր ² , տոննա	5007	4822	103.8
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	1262.0	1381.9	91.3
Պաղպաղակ, տոննա	1298.3	1101.5	117.9
Պահածո, հազ. պայմ. բանկա	89628.5	52648.8	170.2
Ալյուր, տոննա	131391	109879	119.6
Ձավարեղեն, տոննա	8.1	12.0	67.5
Հաց և հացամթերք, տոննա	293051	293642	99.8
Հրուշակեղեն, տոննա	3730.7	3386.9	110.2
Մակարոնեղեն, տոննա	903.1	1084.5	83.3
Բուսական յուղ, տոննա	2122.1	1459.3	145.4
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	11105.3	10338.0	107.4
Կոնյակ, հազ. լիտր	7093.1	6059.7	117.1
Խաղողի գինի, հազ. լիտր	2042.3	6541.7	31.2
Շամպայն գինի, հազ. լիտր	670.0	621.9	107.7
Փարեջուր, հազ. լիտր	7311.6	7078.1	103.3
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	34101.2	26820.0	127.1
Բնական հյութեր, հազ. լիտր	4237.3	2495.8	169.8
Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ	39024.8	36564.4	106.7
Աղ, տոննա	31854.0	30330.2	105.0
Սիգարետներ, մլն. հատ	3221.9	2815.3	114.4
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	1728.3	1279.1	135.1

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար-դեկտեմբեր	2002 թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	346.7	571.9	60.6
Բրոյա գործվածքներ, հազ. մ ²	49.8	37.5	132.8
Գորգեր և գորգեղեն, մ ²	29261	16214	180.5
Գուլպեղեն, հազ. զույգ	425.8	491.8 ⁰	86.6
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	2999.7	1907.1	157.3
Կարի արտադրանք ³ , մլն. դրամ	9647.8	8109.5	119.0

¹ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

² Ներառյալ գյուղատնտեսական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2003թ. հունվար-դեկտեմբերին *քիմիական* արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 25.1%-ով, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 8.9%-ով, պլաստմասսայից իրերինը՝ 6.7%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և լվացող և մաքրող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 50.0 և 28.1%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար-դեկտեմբեր	2002 թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Հավաքովի երկաթետոնե կառուցվածքներ, մ ³	28827 ⁰	26182	110.1
Ապրանքային բետոն, մ ³	55404	30778 ⁰	180.0
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	83598	69293	120.6
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	325434	269701	120.7
Կիր, տոննա	4369	4932	88.6
Ցեմենտ, հազ. տոննա	384.3	354.5	108.4
Փաջ, տոննա	57835	44943	128.7
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	75669	67509	112.1
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	131743	111745	117.9
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	48816	15344	3.2 անգամ

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 82.4 անգամ, ալյումինե փայլաթիթեղինը՝ 77.8%-ով, պղնձե խտանյութում պղնձինը՝ 8.6%-ով, իսկ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը նվազել է 3.7%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2003 թ. հունվար-դեկտեմբեր	2002 թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	177	287	61.7
Ռելեներ, հազ. հատ	302.8	344.5	87.9
Ուժային ճկուն կաբելներ, կմ	4.4	4.3	102.3
Ուժային կաբելներ մինչև 1 Կվ լարման համար, կմ	1.9	37.1	5.1
Տեղակայման հաղորդալարեր, կմ	81.5	721.9	11.3
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	3853.3	6613.8	58.3
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	3218	2492	129.1
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	182	436	41.7
0.5-100 կվտ հզորության փ/հ գեներատորներ, հատ	20	50	40.0
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	19	34	55.9
Համակարգիչներ, հատ	2080	1343	154.9
Զրային հաշվիչներ, հատ	197515	21180	9.3 անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	88	-	-
Պոմպեր, հատ	1177	3629	32.4